Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  N 2

N ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ

«07» նոյեմբերի 2023թ.

ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,

Հանձնաժողովի անդամներ՝ Հ.Վարդանյան, Հ.Գրիգորյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Պատվիրատու՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24» ծածկագրով Ջրվեժ համայնքի կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների մատուցման նպատակով հայտարարված գնանշման հարցման մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԽԾՁԲ-23/24 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցմանը հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը | Չափաբաժնի համար |
|---|---|---|---|
| 1 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | Արարատի մարզ, գ.Ոստան, Երևանյան 13<br>հեռ. 096 59 50 10<br>architools@mail.ru | 2 |
| 2 | «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ | ք.Հրազդան, Վանատուր թաղամաս 571<br>հեռ. 098 88 28 98<br>nareksafaryan95@gmail.com | 2 |
| 3 | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | Երևան, Քանաքեռի 13 փողոց 32/1 տ.<br>Հեռ. 094 32 24 32<br>grandinspection@mail.ru | 2 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի, «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի և «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Մասնակցի կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժին 2: Ջրվեժ համայնքի կարիքների համար՝ արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայություններ

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | | Գնման գին |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը | |
| 1 | «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ | 2 000 000 | 0 | 2 000 000 | 2 000 000 |
| 2 | «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ | 1 000 000 | 200 000 | 1 200 000 | |
| 3 | «Գրանդ Ինսփեքշն» ՍՊԸ | 1 460 000 | 0 | 1 460 000 | |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Գնային պայմանը գնահատվել է հետևյալ կարգով /համաձայն հրավերով սահմանված բանաձևի/
Չափաբաժին 2

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Գնային պայմանի գնահատականը |
|---|---|---|
| 1 | «ԱՐԽԻ ԹՈՒՎՍ» ՍՊԸ | 15 |
| 2 | «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ | 30 |
| 3 | «Գրանդ Ինսփերշն» ՍՊԸ | 20.55 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Հրավերով սահմանված ոչ գնային պայմաններ.

-«Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները հավաստող փաստաթղթերը ամբողջությամբ ներկայացվել է՝ «Գրանդ Ինսփերշն» ՍՊԸ-ի կողմից:

«Մասնագիտական փորձառություն» և «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշները հավաստող փաստաթղթերը չի ներկայացրել՝ «ԱՐԽԻ ԹՈՒՎՍ» ՍՊԸ-ի կողմից:

-«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող փաստաթղթերը չեն համապատասխանում պահանջներին, իսկ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը հավաստող փաստաթղթերը ամբողջական չեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել անհամապատասխանություններ արձանագրված մասնակիցներին, առաջարկվում է մինչև 2023 թվականի նոյեմբերի 9-ի ժամը 10:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով չկայացած է հայտարարվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.Նիստը ընդհատվում է մինչև 2023 թվականի նոյեմբերի 9-ի ժամը 12:30-ն՝ շտկված փաստաթղթերի հիման վրա հայտերի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Հ.Վարդանյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան